Արձանագրություն 3
«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար « ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -17/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.06.2017թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ս.Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժ.գծով փոխտնօրեն
Անդամներ
Ա.Է.Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխ. հաշվապահ
Ա.Գ.Սիմոնյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ.Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գանձապահ
Ա.Հակոբյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վարորդ, մեխանիկ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

1. <u>ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ 19.06.2017թ.-ին հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.06.2017թ.-ին ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ գրաված մասնակից ճանաչված «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով հրավերով սահմանված ժամկետում (19.06.2017թ.) ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՖԼԵԾ» ՍՊԸ	բավարար

-Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -17/1» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն անգործության ժամկետ է սահմանվում <<ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-17/1>> ծածկագրով հայտարարված ԳՀ ընթացակարգով պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

4.2 Գնման ընթացակարգի արդյունքների հաստատման նիստից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում <<Վեղու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենին տրամադրել մրցույթի արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենը՝ օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու նպատակով: Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը պետք է կնքվի սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին, «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Վեդի, Գայի 2:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Ս. Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Ա. Է.Սիմոնյան
	_____	Ա. Գ.Սիմոնյան
	_____	Հ.Գաբրիելյան
	_____	Ա.Հակոբյան
Քարտուղար՝	_____	Լ.Բազիկյան